ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԶԱՏԻԿՅԱՆ Հ. Գ.

Սկսած 1898 թ. մինչև իր վախճանը՝ Հայկական հարցը դարձավ ՀՅ Դաշնակցության հիմնադիրներից մեկի՝ Քրիստափոր Միքայելյանի գործունեության հիմնական նպատակը: Կատարելով կուսակցության երրորդ Ընդհանուր ժողովի որոշումը՝ 1898 թ. աշնանից նա գործունեություն ծավալեց Եվրոպայում, խմբագրեց «Դրոշակ» թերթը, նրա շուրջ համախմբեց հայրենի և օտար հայանպաստ բոլոր ուժերը՝ նպատակ ունենալով Եվրոպայում ձևավորել հասարակական կարծիք, որ նպաստելու էր Հայկական հարցի բարձրացմանը և, եթե հնարավոր էր, լուծման հանգեցնելուն:

1895-1896 թթ. կոտորածները՝ տերությունների թղթե արշավների ուղեկցությամբ, Հայկական հարցը նորից մղեցին փակուղի: Բռնատիրությունը կոտորածները որակեց իբրև հայ-քրդական ազգամիջյան բախումներ, ապա նաև քրդերի պատասխանն արևմտահայ ազատագրական շարժումներին, որոնք, իբր, ուղղված էին քրդերի տնտեսական ու քաղաքական ազատությունների դեմ:

Դժբախտաբար, նման մտայնությունը հատուկ էր նաև «հայկական դպիրների ու փարիսեցիների» շրջանին, որոնք, օգտվելով ժողովրդի վրա ունեցած ազդեցությունից, պատճառ էին դառնում հայ հեղափոխությունից, այն է՝ ազատագրական պայքարից հեռու պահել հայության ստվար զանգվածներին: ՀՅ Դաշնակցության շարքերում ևս կային մարդիկ, որոնք, կիսելով այդ գաղափարը, քննադատության հեղեղ էին թափում թե՛ Բյուրոյի, թե՛ Ք. Միքայելյանի վրա: Այդպիսի անհաջող, պատմական ճշմարտությունից հեռու տեսակետների դեմ էր ուղղված Ք. Միքայելյանի «Ամբոխային տրամաբանություն» աշխատությունը, որտեղ, բացի քննադատություններին պատասխանելուց, կատարվում էին նոր վերլուծություններ, բացահայտվում էր Հայկական հարցի էությունը, նախանշվում էին նրա զարգացման ու լուծման ուղիները:

Քննադատություններին պատասխանելու նպատակով Ք. Միքայելյանը ձայն է տալիս եվրոպացի դիվանագետների, քաղաքական ու պետական գործիչների, որոնց օգնությամբ ձգտում է հստակ պատկերացում ձևավորել Հայկական հարցի ծագման, դրա բովանդակության մասին, պարզաբանումներ տալիս «հայ հեղափոխություն»հասկացության մասին:

Այսպես, Է. Գրինի՝ «Հայե՞րը գրգռեցին թուրքերին և տեղի ունեցան կոտորածները» հարցին պատասխանում է հարցով՝ «Բայց ո՞վ գրգռեց հայերին…»: Այստեղից էլ, իբրև արդար պայքարի հատկանիշ, հայ հեղափոխական գաղափարը ներկայանում է, իբրև երևույթ՝ այս խաղաղ և դարերի ընթացքում հնազանդությամբ տաճկական լուծը կրող ժողովրդի կյանքում:

Կատարվածը, նշում է հեղինակը, «բնական հետևանքն է այն սարսափելի կացության, որ նկատվում է Բեռլինի դաշնագրից հետո…»[1]:

Հովհ. Լեփսիուսը, ամբաստանագիր ուղղելով մեծ տերություններին,«Ի՞նչ բան են Հայաստանի ջարդերը» հարցին պատասխանում է. «…դա Բարձր Դռան ձեռք առած վարչական մի միջոց է, որ ուրիշ շարժառիթ և նպատակ չունի, բայց եթե հայ ազգի ջնջումովը անիրագործելի դարձնել մեծ պետությունների պահանջած բարենորոգումները…»[2]:

Ք. Միքայելյանը հստակ սահմանում է «հայ հեղափոխություն» հասկացությունը. «…հայ հեղափոխական շարժումը ոչ այլ ինչ է, եթե ոչ նույնպես մի անհրաժեշտ *բնական հետևանք* միևնույն տնտեսական ու պատմա-քաղաքական պատճառների»[3] (ընդգծ. հեղինակինն է - Հ. Զ.):

Բեռլինի վեհաժողովից հետո՝ հատկապես 1880 թ., սուլթանն ուղիներ էր փնտրում Հայկական հարցը լուծելու համար, որովհետև այն կայսրությունում գոյություն ունեցող միակ հարցն էր, որն առաջ էր բերում եվրոպական միջամտություն: Այստեղից էլ՝ մի կողմից Եվրոպան՝ միայն իր շահերը հետամտող գործնական դիրքորոշմամբ, մյուս կողմից էլ սուլթանական բռնատիրությունը՝ իր հայակուլ քաղաքականությամբ, ստեղծում էին «մի խոշոր դիլեմա»՝ «կամ անպայման բնաջնջում, իբրև մի ամբողջություն, իբրև մի ազգություն, իբրև մի հայրենիքի տեր ժողովուրդ, կամ թե դիմադրություն՝ կյանք, պատիվ, ստացվածք, տուն, հայրենիք, ամեն ինչ բռնաբարող ուժի դեմ»[4]: Միջին ճանապարհ չկար. ո՛չ մշակութային ազդեցությունը, ո՛չ բարենորոգումները չէին ունենալու այն ազդեցությունը, որ կապահովեին հայության գոյությունը կամ մասնակի լուծում կտային Հայկական հարցին:

Եվ, ի վերջո, հայ հեղափոխությունն արդյունքն է այն մեծ ճշմարտության, որը հաստատագրում է. «Կան րոպեներ ժողովուրդների կյանքում, երբ կարելի է հաշտվել ամեն բանի հետ, բայց ոչ լռության»: Այս ընդհանրական միտքը պարզաբանում է հեղինակը. «…լռություն պիտի նշանակեր միայն և միայն ամբողջ ազգի կատարյալ բարոյական անկումը և հեղափոխական գաղափարների, հեղափոխական շարժման կատարյալ սնանկությունը: Փառք ուրեմն այն հերոսներին, որոնք ոչ միայն այդ գարշելի լռությունը փոթորկեցին ու հայ ժողովրդի ամենեն արդար, ամենեն էական զգացումների թարգմանը եղան»[5]: Ասել է՝ հայ հեղափոխությունը շարունակվում էր. ասել է՝ Հայկական հարցը գտել էր իր իսկական տիրոջը: Տերերի մի ամբողջ աստղաբույլ էր ծնվել նաև Արևմտյան Հայաստանում:

Անդրադառնալով տերությունների, հատկապես ռուս-անգլիական հակամարտությանը՝ Ք. Միքայելյանը գրում էր. «…թունավորված հրեշավոր կասկածների ուրվականներով, ահա այն սոսկալի հողը, ուր մեր բախտը որոշելու հրավիրված «քաղաքագետները» կորցրին ոչ միայն իրենց

[1] **Միքայելյան Ք.,** Ամբոխային տրամաբանություն, Ժնև, 1903, էջ 20:
[2] Նույն տեղում, էջ 22:
[3] Նույն տեղում, էջ 26:
[4] Նույն տեղում, էջ 45:
[5] Նույն տեղում, էջ 60:

խիղճն ու ամոթը, որ չեն էլ ուզում ունենալ, այլև իրենց խելքն ու դատելու ընդունակությունները»[6]:

61-րդ հոդվածն անվանելով «ժամանակակից Եվրոպայի ճակատին հրեշավոր դավաճանության հավիտենական արատ», պատմական այդ անարդարությունը շտկելու միակ մի ջոցը համարելով հայ հեղափոխությունը՝ Ք. Միքայելյանը հույս էր հայտնում, որ միայն հայ հեղափոխականն է ընդունակ «Պոլսից մինչև Վան, Ռուսաստանից մինչև Ամերիկա ցնցել հայությանը՝ բոլորի սրտին միևնույն զարկը հաղորդելով»[7]:

Դիմելով պատմությանը, որպեսզի հայկական շարժման նկատմամբ մեղմացնի մեղադրանքների բեռը, որ անպատրաստ շարժում էին անվանում, Ք. Միքայելյանը բերում է բուլղարների օրինակը, որոնք պայքարել են 1828-1878 թթ.՝ 44 տարիների ընթացքում կրելով պարտություն, ազատագրվել են 1878 թ., հույները պայքարել են 1770-1829 թթ.՝ 60 տարիների ձգտումը իրականացնելով 1829 թ., ապա Կրետե կղզին, Սերբիան, Հերցեգովինան, Բոսնիան, Իտալիան, Կուբան: Նշված երկրները, ընդգծում է հեղինակը, միանգամից չստացան ազատություն, կրեցին անլուր տառապանքներ, որովհետև «բաղձանքները չեն, որ ընթացք են տալիս կյանքին», կամ «առաջին բողբոջները ձգելուն պես» չեն հասունանում, անհրաժեշտ են պայմաններ ու ժամանակ՝ հարատև կռիվ, որը «շատ բան կարող է խոստանալ մեզ»[8]: «ՀԱՐԱՏԵՎ ԿՌԻՎ,- ահա թե ուր է մեր փրկության բանալին…չշեղվենք այդ միակ ճանապարհից, որ սփռված է հուսատու ապագայի գրավիչ ծաղիկներով…»[9]:

«Կովկասահայի տագնապը» հոդվածի բնաբան ընտրելով Գյոթեի՝ «Այս է իմաստության վերջին խոսքը – նա է միայն արժանի ազատության և կյանքի, որ ամեն օր կռվով նվաճում է նրանց» խոսքերը՝ Ք. Միքայելյանը նորից շարունակում է հարատև կռվի տեսությունը և անդրադարձ կատարելով դեպի Ռուսաստան՝ ընդգծում այդ տերության էությունը, որը հաստատում է Գրիբոյեդովի խոսքերով՝ «ավերման ոգին, այդ սովորական մեր ուղեկիցը Արևելքում և Արևմուտքում» կայսերական գահից սկիզբ առնող քաղաքականությամբ բազմաթիվ ազգեր ու ժողովուրդներ է տրորել, ճնշել, խեղդել նրանց ազատության ձգտումները, ոտնահարել ազգային արժանապատվությունը, անտեսել դարավոր սրբությունները, ձեռք բարձրացրել ամենանվիրական զգացմունքների վրա: Ասել է՝ «…իզուր անցան ուրեմն» «լռության», «խոհեմության», «բարեմիտ հպատակության» և «հարմարվելու» այն բոլոր պատգամները, որ կովկասահայը դավանում էր ռուս կառավարության վերաբերմամբ»[10]:

Համեմատություն անցկացնելով ռուս և թուրք տիրակալների քաղաքականության միջև՝ Ք. Միքայելյանը նշում է, որ հայության երկու հատվածներում էլ տիրում է գրեթե նույն վիճակը, հարստահարությունների ու հալածանքների նույն ալիքն է սրբում համբերությունը. «Հայ

[6] Նույն տեղում, էջ 73:
[7] Նույն տեղում, էջ 79:
[8] Նույն տեղում, էջ 89:
[9] Նույն տեղում, էջ 90:
[10] Նույն տեղում, էջ 92:

ժողովուրդը իր գլխավոր և երկրորդական մասերում այսօր արդեն տեսնում է, թե որքան նման են Համիդը և Նիկոլան, քուրդը և կազակը…»[11]:

Դրությունից դուրս գալու միակ միջոցը, Հայկական հարցը վառ պահելու միակ եղանակը, հայությանը զգաստ պահելու միակ ճանապարհը նորից մնում է հարատև կռիվը, որի նշանաբանը պետք է լինի «իրար խառնվելու, իրար հետ միանալու, իրոք մի ամբողջություն կազմելու»[12] գաղափարը:

Վերջապես, ո՞րն է Հայկական հարցի լուծման ճանապարհը: Ք. Միքայելյանը, ելնելով ժամանակի պահանջներից, պատմության փորձը հիմք ընդունելով՝ գրում էր. «Ոչ մի բռնություն, ոչ մի հալածանք, ոչ մի սահման չի կարող բաժանել մի ժողովուրդ, եթե նա, տոգորված ընդհանուր շահերի գիտակցությամբ, ունի նաև կռվելու անսահման *վճռականություն* …Մեկ նպատակ, մեկ ամբողջություն՝ հեղափոխական անհաշտ կռվի համար…»[13]:

Անցնելով Եվրոպա և հիմնավորվելով Ժնևում՝ Ք.Միքայելյանը եռանդուն գործունեություն ծավալեց Հայկական հարցը միջազգային ատյաններ բարձրացնելու, հասարակական կարծիքը հայանպաստ դարձնելու ուղղությամբ: Հենց այդ միտքն էր շոշափում Ք. Միքայելյանի՝ 1899 թ. մայիսի 3-ին Սեպուհին գրած նամակը: Հայտնելով, որ մի քանի հայտնի գործիչների մասնակցությամբ հաջողվել է կոմիտե կազմել, որը, բացի Հայկական հարցով զբաղվելուց, պետք է «հասարակական հոսանք առաջ» բերի Եվրոպայում: Սակայն մեկ տարի անց գրած նամակում, հիասթափություն արտահայտելով «Եվրոպայի գթասրտությունից», նորից վերադարձ է կատարում ազատության հասնելու ճշմարիտ ուղուն՝ «…շատ ցանկալի միջամտութիւնը առաջ բերելու միակ միջոցը մեր դիմադրական, յեղափոխական ոյժն ենք համարում»[14]:

Նամակը արժեքաշատ է այն առումով նաև, որ բացահայտում է ՀՅ Դաշնակցության վերաբերմունքը երիտթուրքերի նկատմամբ:

Թե՛ Հայկական հարցի, թե՛ նշված հարաբերությունների պարզաբանման իմաստով կարևորելով նամակը՝ որոշ կրճատումներով տեղ տանք նրա բովանդակությանը (նամակը գրված է 1900 թ. հունվարի 24-ին և ուղղված է Փարիզի ընկերներին - Հ. Զ.).

«Ինչու՞ չեք արմատական կերպով դնում երիտասարդ թիւրքերի եւ մեր յարաբերութիւնների հարցը: Ընդունել մեր կողմից նրանց ծրագիրը – սահմանադրութիւն ամբողջ Տաճկաստանի համար - այդ կը նշանակէր ինքներս հրաժարում էինք Հայկական հարցի գոյութիւնից – մի հարց, որ ունի արդէն իր արիւնալից պատմութիւնը, որի գոյութիւնը ընդունում է ամբողջ աշխարհը: Ո՞վ է մեզ երաշխաւորում, որ հրաժարուելով այդ պատմական ժառանգութիւնից, մենք Ռիզաներից եւ Մուրատներից կը ստանանք աւելին: Չէ՞ որ դրանք հայերով հետաքրքրւում են այնքանով, որքանով մենք կարող ենք հետաքրքրուել օսմանեան կայսրութեան ամբողջութեամբ… որ դոքա մեզանից պակաս ազգասէրներ չեն, որպէսզի

[11] Նույն տեղում,էջ 97:
[12] Նույն տեղում, էջ 98:
[13] Նույն տեղում, էջ 99:
[14] Քրիստափոր Միքայելյանի նամակները, Պեյրութ, 1993, էջ 69, 112:

երբեւիցէ հաճեն մեզ զիջելու այն կտորը, որ մենք ուզում ենք խլել «օսմանեան պետութիւնից»:

Ենթադրենք այնուհետ /եւ/, որ մենք նոյնիսկ այնքան ապերախտ գտնուեցանք դէպի մեր անցեալը, որ հրաժարուեցինք 61-րդ յոդուածից, ռէֆորմների ծրագրից - մեզ խոստացած իրաւունքներից: Ենթադրենք այնուհետ, որ ներկայումս Համիտի կառավարութիւնը զիջեց սահմանադրութեան պահանջին: Ո՞վ է այդ սահմանադրութիւնը կեանքի վերածելու, Ահմէտ Ռիզանե՞ը: Բայց մենք նախ քիչ ենք հաւատում շնորհքին եւ ապա՝ քանի՞ Ռիզաներ ունի Տաճկաստանը՝ այդ ստի ու կեղծիքի, խաբէութեան եւ կաշառակերութեան, թոյնի եւ արեան, մոլեռանդութեան եւ աւազակութեան այդ հայրենիքը, արեւելեան սատկող կուլտուրայի այդ հարազատ ծնունդը…»: Կասկածելով, որ երաշխավորության բացակայության պայմաններում համագործակցել երիտթուրքերի հետ՝ նշանակում է հրաժարվել ամեն ինչից, Ք. Միքայելյանը հիշեցնում է պատմական իրադարձությունները՝ կապված 1839, 1856, 1878 թթ. հետ, և ավելացնում, որ «մեզ համար ուշադրութեան արժանի եւ ձեռնտու է երիտասարդ թիւրքերու հակահամիտականութիւնը», բայց դա չի կարող պատճառ դառնալ նրանց մեծագույն զիջումներ անելու[15]:

Նույն հասցեով 1900 թ. ապրիլի 25-ին գրած նամակում Ք. Միքայելյանն ավելի է հստակեցնում Հայկական հարցի նկատմամբ իր և իր կուսակցության վերաբերմունքը. «Կայ 61-րդ յօդուած, կայ Հայկական Խընդիր վեց Պետութիւններով երաշխաւորած, կայ մի ովկիանոս, որ կազմուած է զուտ հայերի կարմիր արիւնից եւ մեզ պահանջկոտ լինելու իրաւունք է տալիս: Ինչի՞ հետ ենք փոխում այդ ամէնը»[16]:

Չվստահելով երիտթուրքերի պարագլուխներից մեկին՝ Ահմեդ Ռիզային, որը «նպատակ ունի հէնց հայկական, մակեդոնական եւ այլ հար-ցերի համար խորխորատներ փորել ի փառս մեծազօր Տաճկաստանի անձեռնմխելիութեան», Ք. Միքայելյանը նորից վերադառնում է ազատագրության հասնելու միակ ճշմարիտ ուղու գաղափարին և 1900 թ. հունիսի 4-ի նամակում պարզորոշ ընդգծում բոլոր կուսակցությունների համախմբվածության, ապագայի համար պայքարի և, որ ամենակարևորն է՝ «աւելի մեծ տեղ տալով Երկրի եւ Հայկական հարցի ուսումնասիրութեանը թէ անցեալում եւ թէ ներկայում»[17]:

Հաջորդ նամակներից մեկում Ք. Միքայելյանը հայտնում է, որ երիտթուրքերի պարագլուխը շատ վտանգավոր նպատակներ է հետապնդում, որովհետև «Մեր հարցերը (խոսքը նաև մակեդոնական հարցի մասին է - Հ. Զ.)» միջազգային խնդիրներ են՝ ճանաչուած Եւրոպայի կողմից եւ այդ հողի վրայ ունեն իրենց անցեալը, իրենց պատմութիւնը եւ այլն: Այդ բնաւորութիւնից զրկել մեր հարցերը՝ սուլթանի հետ միասին («ընդհանուր ռեֆորմներ») շատ ուրախ կը լինեն եւ շատերը այն «տարրերից», որոնց մենք հակասուլթանական ենք համարում. Ահմէտ Ռիզան, օրինակ, իր Ժնեւ եկած ժամանակ մեզանից ուրիշ բան չէր պահանջում, քան 61-րդ յօդուածից ձեռք վերցնելը: Հետեւաբար մակեդոնացիներին եւ մեր կող-

[15] Նույն տեղում, էջ118-114:
[16] Նույն տեղում, էջ 131:
[17] Նույն տեղում, էջ 151:

մից արուած մի դիմում այդ կարգի «տարրերին» կարող էր մի քայլ համարուել մեր կողմից «միջազգային» հողից մեր հարցերը տանելու «ներքին խնդիրների» շարքը…»[18]:

Անդուլ աշխատանք տանելով Հայկական հարցը եվրոպական հասարակության ուշադրության կենտրոնում պահելու, հասարակական կարծիքի ճնշման տակ այն բարձրացնելու ուղղությամբ՝ 1902 թ. մարտի 14-ի նամակներից մեկում նա հայտնում է, որ «իբր ուրախալի երեւոյթ, թոյլ եմ տալիս ինձ շեշտելու, որ ներկայումս մեր խնդիրը, Եւրոպայի շատ կէտերում է յուզում: Երկու հարցապնդումներ արդէն տեղի ունեցան վերջերս ֆրանսիական պառլամէնտում, մէկը՝ գերմանական, կը լինի նաեւ իտալականում: Միւս կողմից, կոնֆերանսներ կազմակերպուեցին (շատ յաջող) Փարիզում և Ժընեւում. շուտով սպասւում են նոր կոնֆերանսներ Բրիւսէլում, Բէրլինում եւ Հռոմում: Ապրիլին տեղի է ունենալու խաղաղութեան մեծ քոնկրէն (Մոնակօ)…», բացի այդ եվրոպական մամուլը լայն տեղ է հատկացնում Հայկական հարցին «ու շարունակ նպաստում են մեր խնդրի վառ պահելուն»[19]: Եվ, որպես արդյունք այդ գործունեության, մեջբերում է ֆրանսիացի հայտնի քաղաքական գործչի խոսքերը. «Եւրոպայում նկատուող շարժումը յօգուտ հայերի այլեւս չի լինի *լոկ համակրութիւն*, այլ նախամտածուած միջոց *ստիպելու* կառավարութիւններին ձեռք բարձրացնել Թիւրքիայի վրայ. դա լոկ տենչանք /չ/ է, այլ ցանկութիւն՝ կազմակերպել մի իրական, *գործնական պաշտպանութիւն* ձեր շարժման համար, միայն թէ տուէք մեզ կռուող հերոսներ կոտորողների փոխարէն, միշտ կենդանի պահէք բողոքի անդադրում գոռում-գոչումները Երկրից»[20] (ընդգծ. հեղինակինն է - Հ. Զ.):

«Գոռում-գոչում» հասկացությունը նշանակում էր պայքար, «կոտորվող հերոսներ» արտահայտությունը՝ հաղթական մարտեր, որոնք, իրոք, կստիպեին առաջինը Թուրքիային, ապա նրա եվրոպական հովանավորներին փոխել Հայկական հարցի նկատմամբ վերաբերմունքը, իրագործել նախ 61-րդ հոդվածը, ապա միջոցառումներ մշակել ավելի լայն իրավունքների համար:

Շփվելով եվրոպական երկրների քաղաքագետների, գործիչների, պետական այրերի հետ՝ Ք. Միքայելյանն առաջինն զգաց Հայկական հարցը խտացված ներկայացնելու անհրաժեշտությունը, որը պետք է ամփոփվեր մի «գրուածքում»: «Մեզ համար անհրաժեշտ է մի ամփոփ գրուածք «Հայերի եւ հայկական հարցի մասին»,- գրում էր Ք. Միքայելյանը Մ. Վարանդյանին հղված նամակում (1920 թ. 26 ապրիլի), դժգոհում, որ ընտրված մարդիկ՝ Խաչատուր Մալումյանը (Ակնունի) և Համբարձում Առաքելյանը, դեռևս ոչինչ չեն արել այդ ուղղությամբ[21]:

Ինչու՞ էր զգացվում այդ ձեռնարկի անհրաժեշտությունը, որովհետև թեև Եվրոպայում ստեղծվում էր հասարակական կարծիք, թեև գործիչներից շատերը ցուցաբերում էին հոգացավություն, սակայն նրանց համար դեռևս պարզ չէր ոչ միայն հայոց պատմությունը, նրա մաքա-

[18] Նույն տեղում, էջ 167-168:
[19] Նույն տեղում, էջ 254:
[20] Նույն տեղում, էջ 255:
[21] Նույն տեղում, էջ 263:

ռումները քոչվոր ցեղերի դեմ, այլև բոլորովին անտեղյակ էին Հայկական հարցի բովանդակությանը և այն դիտարկում էին սոսկ որպես համիդյան ջարդերի առթիվ պատասխանատվության կամ լավագույն դեպքում՝ 61-րդ հոդվածն իրագործելու տեսանկյունից: Փաստորեն, խոսքը վերաբերում էր Հայկական հարցի քարոզչությանը Եվրոպայում, որ հակադրվելու էր այդ հարցը «ներքին հարց» դարձնելու երիտթուրքական տեսակետին:

Ասված միտքն առավել ընդգծելի է ներկայացնում Պիեր Քիյարը՝ գրելով. «Եվրոպական մեծ պետությունների ամոթալի անգործությունը նրան զայրացրին և տրտմեցրին, սակայն նա հասկացավ միաժամանակ, որ այն անգիտությունը, որին մատնված էին եվրոպական ժողովուրդները իրենց կառավարությունների շնորհիվ, թույլ էր տալիս վերջիններին հեշտությամբ շարունակելու իրենց ոճրալի անտարբերությունը»[22]:

Ք. Միքայելյանը նաև եկավ այն եզրակացության, որ Եվրոպայի համակրանքը նույնպես չի կարող ընդհանուր, բուռն շարժում առաջ բերել և ձեռնամուխ եղավ այն ապահովելու աներևակայելի մի միջոցի կայացմանը, որով արժանի դատաստան էր տրվելու մեծ մարդասպանին:

ХРИСТОФОР МИКАЕЛЯН И ПУТИ РЕШЕНИЯ АРМЯНСКОГО ВОПРОСА

ЗАТИКЯН О. Г.

Резюме

Разрешение Армянского вопроса являлось основной и, пожалуй, конечной целью деятельности одного из основоположников АРФ партии Дашнакцутюн Х. Микаеляна. С осени 1898 г. живя и работая в Европе, он пытался добиться позитивного отношения европейской общественности к судьбе столь важного для армян Армянского вопроса, обращаясь с этой целью к посредничеству и помощи европейских дипломатических, политических и государственных деятелей. Однако вскоре он осознал всю тщетность подобных попыток в деле реального восторжествования исторической справедливости. В конечном счете разрешение Армянского вопроса Х. Микаелян связывал лишь с вооруженной борьбой армянского народа.

[22] **Միքայելյան Ք.**, Ե., 1990, էջ 106: